«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀՀ, 3104 Գյումրի, Վարպետաց 176, 301
հեռ. +(374 312) 6-69-92, +(374 91) 45-13-37
էլ փոստ՝ info@shirakcentre.org
Կայք՝ www.shirakcentre.org

Շիրակի մարզպետ Ա. Գիզիրյանին

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Գիզիրյան

ՀՀ կառավարությունը 2011 թ. ապրիլի 14-ին կայացած իր նիստում փոփոխություններ է կատարել 1999 թ. հունիսի 10-ի N 432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337–Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2009 թ. նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման մեջ: Կատարված փոփոխություններով՝ աղետի գոտու բազմաբնակարան շենքերից բնակարան ստացած բազմանդամ ընտանիքներին հնարավորություն է տրվել մեկից ավելի ոչ հիմնական շինություններ զբաղեցնելու դեպքում բնակությունից չազատել և չքանդել դրանցից միայն մեկը: Նույն որոշմամբ սահմանված է, որ բնակարան ստացած ընտանիքների զբաղեցրած ոչ հիմնական շինություններից բնակությունից չազատվող և քանդման ոչ ենթակա շինությունների ընտրության նպատակով, ուսումնասիրություններ կատարելու համար, պետք է ստեղծվի աշխատանքային խումբ՝ համապատասխան մարզպետարանի, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական պետական տեսչության տարածքային ստորաբաժանման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների ներգրավմամբ:

Ուստի խնդրում ենք մեզ տրամադրել տեղեկատվություն,

1. թե արդյո՞ք ձևավորվել է հանձնաժողով,
2. ովքե՞ր են ընդգրկված այդ հանձնաժողովում, նրանց անուն-ազգանունները և պաշտոնները
3. մինչև օրս քանի՞ ընտանիք է դիմել իրենց տնակները քանդելու խնդրանքով,
4. ինչպիսի՞ որոշումներ են կայացվել, քանի՞ դիմումատուի է դրական պատասխանվել, քանի՞ դիմում է մերժվել և ի՞նչ պատճառներով:
5. խնդրում ենք նաև տրամադրել բոլոր դիմած անձանց ցուցակները և նրանց ժամանակավոր կացարանների հասցեները:

Հարգանքով՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյան

Գյումրի
18.05.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«26» 05 2011թ.
N: 03/2434-11

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

հեռ. (0312) 5-33-66, ֆաքս (0312) 3-50-77

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ
«ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ»ՀԿ ՆԱԽԱԳԱՀ՝
ՊՐՆ.Վ.ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թումասյան

«Շիրակի մարզպետին ուղղված Ձեր 20.05.2011թ. հարցման վերաբերյալ հայտնում ենք, որ «կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 408-Ն որոշման 4.1-րդ կետի համաձայն «Շիրակի մարզպետի 2011 թվականի մայիսի 2-ի N41 կարգադրությամբ /կցվում է/ ստեղծվել է աշխատանքային խումբ:

Ստորև ներկայացվում է առ 23.05.2011թ. դրությամբ ժամանակավոր կացարանները չքանդելու վերաբերյալ համապատասխան եզրակացություն ստանալու նպատակով դիմում ներկայացրած ընտանիքների ցուցակը համապատասխան տեղեկատվությամբ:

հ/հ	Ազգանուն Անուն Հայրանուն	Շենքի համարը	Անձերի թիվը	սեն	ժամանակավոր կացարանները	Նանոթություն
1	Հարությունյան Խանում Հայկազի	Մուշ 2թաղ. շենք 8 բն. 39	9	3	121/058 և 121/077	Դիմումի հիման վրա տրվել է դրական եզրակացություն
2	Խուրշուդյան Արշալույս	Մուշ 2թաղ. շենք 1 բն.3	8	2	153/019, 153/044	Դիմումի հիման վրա տրվել է դրական եզրակացություն
3	Ղուկասյան Համլետ	Մուշ 2թաղ. շենք 15 բն.5	10	3	142/087, 142/125	Դիմումի հիման վրա տրվել է դրական եզրակացություն
4	Տոմերյան Ռոզա Գեղամի	Մուշ 2թաղ. շենք 1 բն.9	14	3	232/036, 238/097Մ, 227/129	Դիմումի հիման վրա տրվել է դրական եզրակացություն
5	Մկրտչյան Գոհարիկ Հովհաննեսի	Մուշ 2թաղ. շենք 30 բն.31	7	2	228/285, 228/269	Դիմումի հիման վրա տրվել է դրական եզրակացություն
6	Դարբինյան Սաշա Սամսոնի	Մուշ 2թաղ. շենք 7 բն.34	8	2	217/405, 217/406	Դիմումի հիման վրա տրվել է դրական եզրակացություն
7	Այվազյան Վաչագան Ստեփանի	Մուշ 2թաղ. շենք 5 բն.7	10	2	213/194, 213/195,	Դիմումի հիման վրա տրվել է դրական եզրակացություն

հ/հ	Ազգանուն Անուն Հայրանուն	Շենքի հասարը	Անձերի թիվը	սենյակ	ժամանակավոր կացարանները	Ծանոթություն
8	Առաքելյան Օլգա Անդրանիկի	Մուշ 2թաղ. շենք 16 բն.7	8	2	158/236, 158/238	Դիմումի ուսումնասիրությունն ընթացքի մեջ է
9	Խաչատրյան Ինվեր Համբարձումի	Մուշ 2թաղ. շենք 15 բն. 21	8	1	224/356, 224/291	Դիմումի ուսումնասիրությունն ընթացքի մեջ է
10	Գինոսյան Մարտուն Պողոսի	Մուշ 2թաղ. շենք 29 բն.51	10	3	217/465, 217/464	Դիմումի ուսումնասիրությունն ընթացքի մեջ է
11	Միքայելյան Վահան Լեվոնի	Մուշ 2թաղ. շենք 4 բն.4	7	2	214/341	Դիմումի ուսումնասիրությունն ընթացքի մեջ է
12	Սարգսյան Ռիգա Միսակի	Մուշ 2թաղ. շենք 4 բն 34	10	2	159/041, 232/136	Դիմումի ուսումնասիրությունն ընթացքի մեջ է

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

Խ.ՊՈՂՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա.Մարգարյան
Տ.Հարությունյան
Հեռ.0312 35539

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<02>> 05 2011թ. N: 41 ք.Գյումրի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի <<Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշումներում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին>> N 1402-Ն որոշման 4.1-րդ կետի դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարան ստացած ընտանիքների կողմից զբաղեցված ոչ հիմնական շինություններից՝ բնակությունից չազատվող և քանդման ոչ ենթակա շինությունների ընտրության նպատակով ուսումնասիրություններ կատարելու համար ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբի ղեկավար Տիգրան Հարությունյանին՝ բնակարան ստացած ընտանիքների դիմումները ստանալուց հետո աշխատանքային խմբի կողմից 5-օրյա ժամկետում կատարված ուսումնասիրությունների հիման վրա կազմել ոչ հիմնական շինությունը բնակությունից ազատելու կամ չազատելու վերաբերյալ հիմնավորված եզրակացություն:

3. Սույն կարգադրության հսկողությունը վերապահել ինձ :

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված

ՀՀ Շիրակի մարզպետի

2011թ. Հունվար «02» N 41

կարգադրության

ԿԱԶՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Տիգրան Հարությունյան -ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ, խմբի ղեկավար,

Անդամներ՝

Անուշավան Պապիկյան -Գյումրու քաղաքապետարանի բնակարանային հաշվառման և բաշխման բաժնի պետ /համաձայնությամբ/,

Մկրտիչ Ասատրյան -ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի աշխատակից,

Սուրեն Ավագյան -ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Շիրակի բաժնի գլխավոր տեսուչ ,

Լեոնիկ Հովհաննիսյան -Գյումրու քաղաքապետարանի բնակարանային հաշվառման և բաշխման բաժնի գործակալ /համաձայնությամբ/:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Խ.ՊՈՂՈՍՅԱՆ